ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Աբովյան 27,
Հեռ.՝ +37410 565353 Ֆաքս՝ +37410 542779 Էլ.փոստ՝ office@setcenter.am

REPUBLIC OF ARMENIA
"SETTLEMENT CENTER"
CLOSED JOINT-STOCK COMPANY
27, Abovyan str., 0009 Yerevan, Republic of Armenia
Tel.: +37410 565353, Fax: +37410 542779 e-mail: office@setcenter.am

03 » 10 2025թ.
№ 352 Հ

«ՍՄՄՀԱԲ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ԼԻԴԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՍՄՄՀԱԲ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2025 թվականի օգոստոսի 06-ին կնքված «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/03-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ին մատակարարել 2 համակարգիչ՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջների:

Ձեր 03.10.2025 թվականի գրությամբ հայտնում եք, որ «ՍՄՄՀԱԲ» ՍՊԸ-ն հրաժարվում է մատակարարել պայմանագրով նախատեսված 2 համակարգիչը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թ-ի մայիսի 4-ին ընդունված 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների կազմակերպման կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի դ) պարբերությամբ՝ կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով այն լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

Նույն 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է

պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/03-1» ծածկագրով ապրանքի մատակարարման Պայմանագրի գումարը կազմում է 494160 ՀՀ դրամ:

Այն ժամանակ երբ Պայմանագիր կնքած անձը վճարում է պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները, Պատվիրատուն տվյալ մասնակցի վերաբերյալ չի դիմում լիազոր մարմնին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներգրավելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/03-1» ծածկագրով գնման Պայմանագրի տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները փոխանցել մեր ընկերության «Արդշինբանկ» ՓԲԸ-ի Աղասյան մասնաճյուղի 247460050005 բանկային հաշվեհամարին՝ պայմանագրի ապահովում 49.416 ՀՀ դրամ և որակավորման ապահովում 74.124 ՀՀ դրամ, ընդամենը 123.540 ՀՀ դրամ:

Գումարների փոխանցումից հետո խնդրում ենք այդ մասին Ձեր կողմից ստորագրված գրությամբ տեղեկացնել մեր ընկերությանը՝ կցելով գումարների փոխանցման վերաբերյալ փաստաթղթերի սկանավորված տարբերակները:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ն. Հարությունյան

Կատարող՝ Վ. Բաբայան
Հեռ.՝ 010 565353 (23)